ՆՈՐ-ԴԱՐ

№ 19 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 10 Փետրվարի

1889

Ուրբաթ 10 Փետրվարի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 19

Տարեկան 10 րուբլի, վեց ամսվ. 6 րուբլի, երեք ամսվ. 3 ր. 50 կ., ամսվ. 1 ր., հատ. 5 կոպեկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի ամն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամերի։
Յայտարարութիւնների գնաին 2 կ., անհրաժեշտի համար կրկնապատիկ։

ԿԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

Լրագրի բաժանորդագրութիւնը շարունակւում է.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Յունվարի 1-ից	10 ր. — կ.	Յուլիսի 1-ից	6 ր. — կ.
Փետրվարի 1-ից	9 » — »	Օգոստոսի 1-ից	5 » 25 »
Մարտի 1-ից	8 » 50 »	Սեպտեմբերի 1-ից	4 » 50 »
Ապրիլի 1-ից	8 » — »	Հոկտեմբերի 1-ից	3 » 50 »
Մայիսի 1-ից	7 » 25 »	Նոյեմբերի 1-ից	2 » 50 »
Յունիսի 1-ից	6 » 50 »	Դեկտեմբերի 1-ից	1 » 50 »

Եվրոպա, Թիւրքիա և այլ հեռաւոր երկիրներ տարեկան գինը՝ 30 ֆրանկ, վեց ամսականը՝ 20 ֆրանկ։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դիմաց, տ. № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ **կամ** Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Հեռագիր Ախալցխայից։
«Նոր-Դար»-ի հեռագրները։
Քրանիկոն. — Լուրեր Սպահանի կեանքից։
Թղթակցութիւններ. — Բաթում. Տաճիս։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր.
Տեղեկատու։
Յայտարարութիւններ.

Հինգշաբթի օրը Ախալցխայից առաջանք հեռանալ վերին առաքանի ցաւալի հեռագիրը.

«ԱԽՈՒՅԻՍ, փետրվ. 9-ին, ժամը 11-ին, 15 րոպէ անց։

Եպիսկոպոսի կարգադրութեամբ փետրվարի 8-ին գպրոցից արձակուած երկու անպիտան ուսուցիչները փետրվարի 9-ին չարամիտների աչակցութեամբ յարձակւում են տեղիս Հայոց գպրոցների տեսուչ Աբիսողոմ Յովհաննիսեանի վրայ՝ նրան ծեծելու նպատակով։

Ոստիկանութիւնը վրայ հասաւ. գպրոցները առ ժամանակ փակուած են։

Հրաւիրում ենք բարձր հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը մեր գպրոցների վրայ»։

Սմբէթ և նախատինք այն մարդկանց, որոնք իրենց մի պաշտօնի համար, իրենց ողորմելի ես-երի համար օրէնք, կարգ, իրաւունք, պարտաւորութիւն մոռանում են. ոռնակոխ են անում գպրոցը, գըպրոցական գործը և Հայ մատաղ սերնդի կրթութեան գործը և նըրա ապագան գոհւում են իրենց ողորմելի կրքերին, իբրև գործիք ծառայում են չարամիտների նենգութեանը։

Այդ ամենը տեսնելով վրդովւում ենք և զայրանում, բայց և չենք կարող մեր զարմանքը չյայտնել այն դանդաղկոտութեան, այն անտարբերութեան համար, որոնց չնորհիւ կարելի եղաւ Ախալցխայում գպրոցները և գպրոցական գործը այդ ողորմելի և՛ անպատիւ, և՛ յուսահատեցուցիչ դրութեանը հասցնել։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՉԱՐՁՈՑ, 8 փետրվարի.—Սրգուբահման խանը գանւում է Մազար-Շերիֆում և անձամբ գատում է Կարկիում Իսահակ-խանի կատարած ապստամբութեան մասնակցողներին։ Ռուսական գունդը գեներալ Լրիստիանիի հրամանատարութեամբ կազմ և պատրաստ կեցած է պատերազմի. սակայն կասկածելի է, որ աւազանները յարձակում գործեն բուխարացիների կամ ռուսների դէմ։ Աւղանական-Թուրքեստանում Իսահակ-խանի տեղ զինուորական նահանգապետ նշանակուած է Ղօլամ-Հայդերը, ղիլղաների և Իսահակ-խանի ապստամբութիւնների զսպողը։

ՎԵՆՆԱ.—Ինչպէս Պէստից հաղորդում են, Պէստի հակացոյցերը կազմակերպող յանձնաժողովի այսօրուայ նիստում Պաամանդին խընդիրը է յարուցել ֆրանսիական ձևով դիմադրելու և Ունգարիայում հայրենասէրների միութիւն հաստատելու մասին։ Մտադրութիւն կայ հեռագրով դիմելու Դերուլէդին, որ ուղարկէ ֆրանսիական հայրենասէրների միութեան կանոնագիրը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Խմբագրութիւնս ստացաւ Պարիզում գոյութիւն ունեցող հնդկա-չինական ակադեմիական ընկերութեան (Société Académique Indo-Chinoise de France) կողմից մի ծանուցումն։ Ընկերութեան քարտուղարը յայտնում է մեզ, որ հրատարակենք ծանուցման թարգմանութիւնը։ Ինչպէս երևում է, ֆրանսիացիները ուզում են մօտիկ յարաբերութիւնների մէջ մտնել Կովկասի և Անդրկասպեան երկրների հետ՝ ընտրելով այս երկիրները իրրև աչող, չահաւէտ և նոր ասպարէզ ֆրանսիական դրամալլուխները չահեցնելու առևտրական և այլ գործարանական ձեռնարկութիւններով։ Դրա համար էլ ակադեմիական ընկերութիւնը կամենում է, որ Թիֆլիսում ֆրանսիական հիւպատոսութիւնը միջնորդ և Թուրքեստանը, ի հարկի ֆրանսիացիների փարատութեամբ։ Ախտահան ակադեմիական ընկերութիւնը կամենում է, որ փոխ-հիւպատոսներ նշանակուին Նոր-Նախիջևանում և Բաքու քաղաքներում, իսկ Վլադիվոստոկում, Ղարսում և Սրետենսկում հիւպատոսական գործակալներ։

—

Մարտի 3-ին, Թիֆլիսի պալատի երկրորդ դեպարտամենտում նշանակուած է Բաքուի քաղաքային փարչութեան և մասնաւոր անձերի մէջ ծագած պատահական իրողութեան, ինչպէս բարդ է այս ինդիրը, որ պալատի անդամ պ. Աէրկինը, որին յանձնուած է գործի զեկուցումը, երկու ամիս ժամանակ զարար է տասնել անհն տետակ գործերից, պարզ պի, «Тиф. Лист.»-ի ասելով, հնար անեցաց զեկուցում պատրաստելու։

—

Ներկայ տարուայ գարնանը, ինչպէս հաղորդել էինք մի անգամ, պետական կալուածների մինիստրութիւնը մտադիր է Թիֆլիսի մօտերքում ձիթենու հաստատութիւն անել։ Ներկայացուած «Моск. Вѣд.»-ն հաղորդելով նոյն լուրը, ասելացնում է, որ նիմի փորձն աջողութիւն գտնէ, այն ժամանակ մտադրութիւն կայ Կովկասում ձիթենու ընդարձակ անկաչանների հաստատելու, որի կատարումը կը յանձնուի պետական կալուածների մինիստրութեան մէջ կազմուած մի առանձին վարչութեան։

—

Կովկասեան գրաքննական մասնաժողովի կրտսեր գրաքննիչ պետական խորհրդական Խաչատրով, իբր ինդրի համաձայն հրաժարուած է պաշտօնից և իբր օգտուէա գործունէութեան համար առացել է իսկական պետական խորհրդականի տասիճանը։

Պ. Խաչատրովը վարում էր վրացերէնի գրաքննչի պաշտօնն, բայց մի քանի անգամ, կարճ ժամանակով, քննել է և հայ թերթերը։

—

Հանգուցեալ դրաֆ Լօռիս-Մելիքեանի այրիին կատարութեան կողմից տարեկան թօշակ նշանակուած է 5000 րուբլի։ Հանգուցեալի թաղման համար այգանի գանձարանից, «Тиф. Лист.»-ի տեղով, ուրուած է նոյնպէս 5000 րուբ։

—

Որթերի գատարանի նախկին նախագահ Ն. Շանչեանցի գործը սկսած է պատրաստ գնուած մարդ չորսին։

—

ՄԱՆՐԱՄԱՍԻՑ.—Այսուհետ մի վարչական երկրաչարժ էր արևելքից դէպի արևմուտք (Զէ նշանակուած օրը և ժամը. խմբ.)։

—

ԲԱԹՈՒՄԻՑ.—Փետրվարի 6-ին, առաւօտեան ժամը 7-ին սկսուեաց դրաֆ Մ. Տ. Լօռիս-Մելիքեանի յուղարկաւորութեան հանդէսը։ Ջնայելով առաւօտեան վաղ լինելուն, ժողովուրդը նոյնքան խուռն էր, որքան գոգաղն ընդունելու օրերը։ Նախ օրը նկեղեցու բակից մինչև կայարանի մօտ կանգնած էր զօրքը, որի միջով կանաչապատ ուղիով գնում էր պիակաւոր բարձրաստիճան պատանների և պատուոյ քաղաքացիների ուղեկցութեամբ։ Մի քանի բարձրաստիճան ընտանիք, որոնց հետ և տեղիս նահանգապետի օդնական իշխան Ջերխասովը իր ընտանիքով, սպայ զգեստով ուղեկցում էին դագաղի դիակը։ Կայարանին մօտ, երբ դագաղը պիակաւորից իջեցրին, սկսուեցաւ եւակի հրաժանադրութիւն։ Դնացքի երթալը ժամանակ խիստ էր, դարդարուած դագաղը արդէն տեղաւորուած էր տանձին դափնեպատ վագոնի մէջ, այդ ժամանակ հանդուցեալի որդին մօտեցաւ բարձրաստիճան պատանուն և քաղաքացիներին և յայտնեց իր սրտագին չնորհակալութիւնները և այնուհետև գնացքը չարժուելով տեղից տարաւ Թիֆլիս հանգուցեալ դրաֆի մարմինը։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ. — Փետրվարի 2-ին վախճանեցաւ մեր ուսումնարանների հոգաբարձու Յովհաննէս Բարայեանցը։ Թաղումը յուսադրեցաւ սրսի պատճառով Շաբաթ օրը, փետր. 4-ին, վատաւորագէս կատարուեցաւ յուղարկաւորութեան հանդէսը։

Օրիորդաց ուսումնարանների կողմից նուիրուած էր մեզ գեղեցիկ պըսակ, որ ասիկսօ առաւերով գրուած էր հանգուցեալի անուան և ազգանուան գլխատառերը՝ «Յ. Բ.»

Եկեղեցական կարգը կատարելուց յետոյ կարգադրեցաւ մի ճաւ. յետոյ տեղիս վեր. առաջնորդ Դրիգորիս եպիսկոպոսը խօսեց մի քարոզ, որի խօսքերը մեծ ազդեցութիւն գործեցին ժողովրդի վրայ։

Եկեղեցուց դուրս գալով, խուռն բազմութիւնը հետևեց հոգևոր դասակարգին, կարճս չէին ուզում բաժանուել իրենց հանգուցեալ բարերարից։ Ջնայելով որ սաստիկ ցեխ էր, բայց ոչ ոք ուշադրութիւն դարձնող չկար, մինչև հանգուցեալը ուսերի վրայ տարան հանգուցեալի դագաղը։

Գերեզմանի վրայ կարգը կատարելուց յետոյ, նորից կարգային ճաւեր ժողովուրդը դադցուած տխուր վերադարձաւ քաղաք, կորցնելով մի նշանաւոր համաքաղաքացի, մի ընտիր հայ մարդ։

—

Պետերբուրգում «Կարմիր խաչի» ընկերութեան դահլիճում, Մ. Ի. Լազարեանցը «Ալիմնտագործութեան և տեսարի օժանդակող» ընկերութեան ժողովում մի երկար և մանրամասն զեկուցումն է կարդացել տնտեսային արդիւնագործութեան և արուեստների ներկայ դրութեան մասին։ Պահլիճը լիքն է եղել և կողմնակի անձերով զեկուցումն մի մասն է միայն կարդացուել, թէև ամբողջ ժողովում այդ զեկուցումից ուրիչ ինդիր չէ եղել։ Զեկուցման մէջ պ. Լազարեանը սկսում է մանրամասնաբար պարզել Ռուսիայում տնտեսային գործի սկիզբը և հասնում է մինչև Օտոչիլների Կովկաս գալը։ Նոսերից հոգևոր գիտելու հատկութիւն ունեցող Օտոչիլները ձկնորսութեան և մետաքսագործութեան մէջ մեծ յաջողութիւն են ունեցել։ Ջնայելով այս ամենի, նոքա մեծ դժուարութիւնների մէջ չորրորդ տարին են բանում դարձը։ Իսկ արուեստների գործում ամենակարճ ժամանակում հասկանալի թէ կատարեալ տէր դարձան, մանաւանդ որ նոա Անդրկովկասեան երկաթուղային փարչութեան մէջ, որի ձեռքն է գեռ Սև ծովով նաւերի արտահանութիւնը, «ռատա» չէ։ Սակայն պ. զեկուցանողն այս ամենի մասին խոստանում է մեզ անգամ խօսել։ Գարնի առաջից սկսում է, որ նաերային գործը կանոնաւորելու ամենամեծ միջոցը նաերանցն է, որ պէտք է չինել Կասպից և Սև ծովերի միջև։ Մայրաքաղաքի թերթերի ասելով, զեկուցման չարունակութիւնը կարդացուելու էր փետրվարի 8-ին։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Մեր ակնրի հայոց Գրամատիկական Ընկերութեան անդամները մի ներկայացումն տուին Խաղացին ուսերէն «Листья шелестятъ» դրամայ։ Բազմութիւնը մեծ էր. 50 հոգ կանայք և 4 ուսս կանայք կային. երկու ուսս կին դրամայի ազդեցութեան տակ ուշաթափ եղան. 300 րուբլի չահեցաւ Գրամատիկական Ընկերութիւնը։

—

ԲԱԴՈՒԻՑ. — Բաքուի հասարակութիւնից չատերն են ցանկանում տնեսնել տեղս «Մարդ. Ընկ.» ինցիատոր, հանդուցեալ բժիշկ Գաւիթ Ռոստոմեանցի լուսանկարը, բայց ձեռք բերել չէին կարողանում, որովհետև ոչ մի տեղ չէր գտնում։ Այժմս, ինչպէս իմացանք, տեղս լուսանկար պ. Ռոստոմեանցը, նրա մի հին լուսանկար պատկերը դրաշնելով, արդէն պատրաստում է դրա պատճէնները, որոնց պէտք է չուտով վաճառքի հանի, մասչելի գներով։ Նոյն լուսանկարը չատ գեղեցիկ կերպով նկարել է Վեհափառ Կաթողիկոսի Բաքու այցելելու ժամանակ տեղի ունեցած մի քանի տեսարանները։ Պէտք է ասած, որ թէև վերջին ժամանակներս, այսուհետ լուսանկարների թիւը օր աւուր աճում է, բայց նրանց մեծ մասը, մինչև անգամ հիմնաւորապէս ծանօթ չեն իրենց արհեստին և տրուած պատուէրները փչացնում են։

—

Անդրկասպեան երկիրներում ժողովրդի թիւը չատացնելու ինդիրը օրակարգի ինդիր է դարձել։ Մայրաքաղաքի ուսս թերթերը լսելով, որ մեծ քանակութեամբ չինացիներ երևան են եկել Անդրկասպեան երկիրներում, մեծ ազմուկ բարձրացրին, թէ այդ երկիրներում պէտք է բնակեցնել ոչ թէ չինացի, հապա ուսներ։ Այդ առթիւ Ջարգօրից տեղական թերթերին գրում են, թէ Շուչա գաւառի պիղտպետները մօտերքս ստացել են հրամանագիր, որպէս զի մասնացոյց անեն չքաւոր գիւղացիներին, որպէս զի նրանց բնակութեամբ ուզարկեն Մերվի չրջանը, խոստանալով մեծամեծ արտօնութիւններ չնորհել նրանց։

—

ՄԱՆՐԱՄԱՍԻՑ պ. Արշակ Թումանեանցը ուղարկել է խմբագրութեանս 10 րուբլի, որպէս զի այդ գումարից 3 րուբլին յանձնենք էրզրումցի կոյր ուսաց, 4 րուբլի Բաֆֆիի գրքերի հրատարակութեան և 3 րուբլի Աղգութեան ընտանիքին։ Այդ գումարը հաւաքուել է հանգանակութեամբ մի մտերիմ մարդու քսանուհինգամեայ

պակի ամնամխրթեան ժամանակ. Աբժ. Յակովը քահանայ Մեհրաբեանցը յորդորել է հիւրերին ուրախութեան ժամում չմոռանալ և բարի գործերի համար մասն հանելու։

—

ԱԼԻՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ.—Պահք պահելը հասարակ ժողովրդի, մանաւանդ գիւղական դասակարգի համար առանդաբար սրբագործած եկեղեցական օրէնք է դարձել։ Հայ գիւղացին, չատ անհնչան բացառութեամբ, չէ կարող տարբերել պահք լուծելը ֆարմասիոնութիւնից» (աւետարանականութիւնից)։ Բայց ցաւալին այն է, որ գտնում են մարդիկ, որ իրենք լուծելով պահքը ժողովրդի ներկայութեամբ, դեռ քարոզում են, թէ «կերէք և դուք, որ ընչասէր չըլլաք»։ Այս տեսակ վարմունքից մանաւանդ պէտք է ահւի խոյս տալին այն մարդիկ, որոնք կոչուած են ժողովրդին առաջնորդելու։ Գայթակղեցնել խեղճ գիւղացուն, վիրաւորել նրա կրօնական զգացմունքն անտեղի է, մանաւանդ որ, նա, ինչպէս ասեցինք, անկարող է զանազանել մէկ երեսոյթ միւսից և նրա համար բացում է հարթ է անարգել ճանապարհ դիմելու հաւատարմների գիրկը։

—

ՂԱՐԱՍՈՒ-ԲԱԶԱՐԻՑ.—Այս տարի մեր հայոց ուսումնարանում ևս ութնածառ էր կազմուած, որ չատ աջող անցաւ։ Չատ արդիւնք դոյացաւ յօգուտ նոյն ուսումնարանի պրոպարանին 50 րուբլի։ Տօնածառը կազմուել էր նորհիւ պ. Ումիկեանցի, որ նոյնպէս ուսումնարանում ուսուցիչ է, նոյնպէս պ. Ումիկեանցի շնորհիւ կազմուած է թատրոնասէրների մի խումբ, որին մասնակցում են ուսուցիչներ և հրէաներ. խումբի մէջ կայ 10—12 տղամարդ, 4 օրիորդ և 2 տիկին։ Ներկայացումը տալիս են տեղիս քաղաքային ժողովարանում Յունվարի 25-ին մեր ուսումնարանի պրոպարանի օգտին։ Ներկայացրին Օստրովսկու «Доходное мѣсто». չատ աջող էին մանաւանդ պ. Մնօ և ա. Սաւինա։ Հասարակութիւնը չատ գոհ մնաց. տեղերի գները չափաւոր էին։ Ոչ միայն պարապ տեղ չէր մնացել նատելու, այլ և կանդնելու համար։ Մտադիր են մի ներկայացում տալու տեղիս հայ-կաթոլիկների ուսումնարանի օգտին, որովհետև բեմը նրանցն է, և մի ներկայացում էլ քաղաքային ուսումնարանի օգտին։

Յուսով ենք, որ պ. Ումիկեանցը քաջալերուած ընդհանուրի յարգանքով և ուշադրութեամբ, ճանապարհի կիսում չի կանգ առնիլ։

—

ԲԱԴՈՒԻՑ.—Ահա քանի ժամանակ է, որ տեղս պահում է մի երիտասարդ չինացի բժիշկ. ինչպէս մենք հասատատ աղբիւրներից կատարեալ տեղեկանալ, նա աջողութեամբ բժշկում է ամէնայն տեսակ հիւանդներին, նոյն իսկ այնպիսիներին, որոնց առողջացնելու մասին, մինչև անգամ յայտնի պրոֆէսսորներն էլ յոյսները կտրել են և ոչինչ չեն կարողացել անել։ Նա ամէն մի մարդու, որը դիմում է իր օգնութեանը, ձեռքը պնդելով և մի չինական գրքի նայելով, որը գրած է լինում իր առջեւը, չատ ճշդութեամբ որոշում է նրա հիւանդութեան տեսակը, առաջմանը, ոլքան ժամանակուայ լինելը և այլն։ Բայց չկարենք լինչու օրերում նրան առնչանութիւնն արգելից այլ ևս բժշկանութեամբ պարապել, որով չատ դժբաղդ անձինք, որոնք նրա հնարիւ արդէն առողջանալու մօտ էին իրենց երկարամեայ կենդանուրկ ցաւերից, վարձակալ յուսահատ դրութեան մէջ են ընկել և չգիտեն ինչ անելու։ Յուսով ենք, որ արգելքը չուտով կը բարձրի, քանի որ նրա բժշկանութեան բարերար պրոտոկոլները այդքով կարելի է տեսնել։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ.—10 վերստ հեռաւորութեամբ գտնուած փոքր Թանկէթ գիւղումն եկեղեցադրծութեան հետևանք դէպքը պատահեցաւ.—տէր գիւղացի մի երիտասարդ մտադրուած է Թիֆլիս գընալու, և գնում է գիւղի հասարակութեան դրագրին խնդրում, որ վկայական սայ իրեն, որպէս զի ճանապարհին «դատաւոր» փող չպահանջեն։ Վերոյիշեալ գրագիրը յանկարծ վրայ է պրծնում դանակը ձեռքին և խփելով գիւղացու աջակողմին փորոտիքը գետ է թափում։ Տեղիս զօրանոցից թէև խլոյն երկու բժիշկ հրաւիրեցին, բայց ոչինչ չօգնեցին. երկու օրից խեղճը հոգին աւանդեց։ Իսկ մեղաւորը բանտարկուած է։

—

Ռուսաց մէջ յայտնի արևելագէտ Վ. Վ. Բադլովը հրատարակել է «Թիւրք բարբառների բառարանի փորձ»-ի առաջին մասը։ Բառարանը բազկացած կը լինի 20—25 մասերից, որոնցից ամէն տարի երկ-երկու մաս է հրատարակուելու։

—

Պարսկական «Ախտէր» թերթը հաղորդում է, որ Ադրբէջանի փոխարքայի օգնական Էմիր-Նիզամը մի նախագիծ է կազմել՝ Աւազիկ-Զալդիրեան չըրջանից Թաւրիզի և Ղազվինի վրայով մինչև Հին-Բայազէտ խճուղի շինելու։ Մախ նշանակուած է 300,000 թուման (900,000 րուբլի)։

—

Ռուսիայում կուտակուած ծխախոտի ահագին քանակութիւնն արտասահման արտահանելուն նպաստելու և այդ նպատակում ընկողները գտնելու համար, «Нов.»-ի ասելով, կազմուում է մի առանձին մասնաժողով գործին տեղեակ անձերից։

—

Թօրպատի ուսումնարանական չրջանի հոգաբարձութիւնը կարդադրել է, որ ալքունի ուսումնարաններում II կարգի կամաւոր վիճաբանականները քննեն քաղաքաբար ռուսերէն լեզուով։ Տեղական ուսումնարաններում ռուսաց լեզուից կրկնաքննութիւն չպիտի լինի։ Ցայտնարարուած է, որ առաջիկայ օդոստոսին, ինչպէս հաղորդում է «Հիւսիսային հեռ. գործ.»-ը, քաղաքային տարրական ուսումնարաններից պիտի արձակուեն այն ուսուցիչները, որոնք անընդունակ են ռուսերէն դասախօսելու։ Գիմնազիաներից պիտի արձակուին այն ուսուցիչները, որոնք ռուսաց լեզուով դաս ասանդելու անընդունակ լինելու պատճառով չաթաթական միայն 10 դաս ունին։ Հոգաբարձուն մանաւանդ ուսումնարանների տեսուչներին ցոյց է տալիս ռուսաց լեզուով դաս ասանդելուն վարժուելու անհրաժեշտութիւնը։ Կուրլիանդիայի նահանգում, Գրլուում եղած գերմանական ազնուականների ուսումնարանը կարգադրուած է փակել։

—

Պարսից Կարուն գետի վրայ օտարազգիներին նաւագնացութիւն սկսելու թոյլտուութիւն լինելուց յետոյ, Խուզիստանի գաւառում և Պարսից ծոցի մի քանի նաւահանգիստներում չտեսնուած կենդանութիւն և չարժում է երևում։ Կառուցանում են զանազան չինքեր, վերանորոգում են ճանապարհները, կամուրջները։ Այս չարժման մեծապէս նպաստում է, «Ախտէր»-ի ասելով, նոյն իսկ Պարսից կառավարութիւնը, որ մեծ չնորհք է ցոյց տալիս երկիրը բարեկարգելու, մտտիական դրութիւնը բարգաւանելու։

Նոյն թերթի ասելով, բարձր Բլյուրեն թոյլ է տրուած դրամատուն (բանկ) բանալու։ Թէհրանում, որ կոչուելու է «Շահին չահ իրան դրամատուն»։

—

ԱԼԻՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ.—Մեր ուսումնարանները, պէտք է խոստովանուել, վերջին ժամանակներս չատ կանոնաւոր կերպով առաջ են գնում։ Պ. Տէր-Միրաքեանցն աչխատում է նախկին բարբարոսական կրթութեան տեղ մարդասիրական ուղղութիւն մտցնել և իրենից առաջ ուրիշ մանկավարժ ուսուցիչների ձեռքով եղած փորձերն էլ հաստատել։ Սակայն երբեմն պատահում են և այնպիսի դէպքեր, որոնք պարզ ցոյց են տալիս, որ միայն տեսչի ջանքերը բաւական չեն ուսումնարանը կանոնաւոր ճանապարհով առաջ տանելու համար, այլ հարկաւոր է, որ ուսուցիչներն էլ աչխատեն իւրաքանչիւրն նպաստելու տեսչին։ Սակայն ուսուցիչների մէջ պատահում են այնպիսի մարդիկ, որոնք իրենց կամայականութիւնը ուզում են օրէնք դարձնել. նրանք անկարող լինելով մանկավարժական մէթոդով առաջնորդուել, նոյն իսկ հակտնալ այդ, դիմում են բարբարոսական միջոցներին։ Այսպէս է օրինակ, մեզանում Սուամվերդցի մի ուսուցիչ, որ իր խօսքը աչակերտներին հասկանալի և ընդունելի կացուցանելու համար մի միջոց ունի միայն—ապտակել, ականջը քաչել, որնցից չատ անգամ աչակերտներն ուչաթափ ընկնում են դասարանի մէջ։ Այսպիսի դէպքերից պ. Տէր-Միրաքեանցը խիստ վրդովւում է և, ինչպէս լսում ենք, աչխատում է այդ վանդալական դաստիարակութեան հետքերը բոլորովին չնչել ուսումնարանից։ Ինչպէս լսում ենք, վնասած աչակերտների ծնողները խիստ միջոցների են դիմելու։

—

Տէլեգրական կրթութեան մխտական յանձնաժողովը բաւական հետաքրքիր տեղեկութիւններ է հաւաքել ալֆաբիտական և ըէալական դպրոցների մասին, նոյնպէս և արհեստագիտական դասարանների մասին։ Իլալական ուսումնարանների թիւը հանում է 101-ի 20,218 աչակերտներով, որոնցից ամէն տարի դասընթաց աւարտում է 600 հոգի և չաւարտած դուրս է գալիս 19,2%, որից էլ միայն 1/3-ն է ուրիշ ուսումնարաններում իր կրթութիւնը չարունակում։ Ըէալական ուսումնարանների վրայ մնում է 2.192,959 րուբլի։ Ուսումնարանական 14 չրջաններում ըէալական ուսումնարանների արհեստագիտական դասարանների թիւը հանում է 814-ի, մնում է 12.764,496 րուբլի։ Բացի տարրական ուսումնարաններում եղած նոյնպիսի դասարաններից, գաւառական և քաղաքական 48 ուսումնարաններումն էլ կան արհեստագիտական դասարաններ։ Աւարիական նահանգութեան ուսումնարանների թիւը հանում 41-ի 1,525 աչակերտներով։

ՍԱՂԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Անհնարին է հայ թղթակցի դրութիւնը՝ մանաւանդ մեր գիւղի պէս տեղում։ Շաբաթական անմխիթար երևոյթները թղթակցութեան նիւթ դարձնելով՝ յոռետեսի անուն է ժառանգում մարդ և, որ վատն է, թչնամիներ էլ է վաստակում... Ինչ անել հապա—Տեսնել ու լռել—Այդ էլ համոզմունքին դաւանիլ է դժուարանում։

Ով ինչպէս՝ չգիտեմ, բայց նուաստս խորին համոզմունք եմ ստաց, որ մամուլը ընդհանրական մի բժիշկ է. մինչև ցաւերդ ճիշդ չդայանես նրան, ճիշդ բուժելութիւն էլ չես սպասել նրանից։ Սակայն համագիւղացիներս՝ մեծ մասամբ, այս ճշմարտութիւնը չեն ուզում հասկանալ։ Ուստի և նեղանում են, վըշտանում են, պայրանում են... երբ իրենց մասին մի բան են տեսնում մի լրագրում։ Բայց, հաւատացած եմ, կը գայ ժամանակ, երբ ամէնքն էլ պարզ կերպով կը հասկանան, թէ ոլքան բարեկամ և ոլքան նախանձախնդիր եմ սիրելի ծննդավայրիս բարեկազմութեանը և հասարակութեան մարդավայել բարօրութեանը։ Կը հասկանան, որ մեր ձըշմարիտ պակասութիւնները հրապարակէս բացատրելով, ոչ թէ մեղ խայտառակելն է նպատակս, քաւ լիցի, այլ միայն այն, որ մեր հոգևոր ու մարմնաւոր—մերձակայ թէ հեռաւոր—բժիշկները՝ մեր զանազան վէրքերի ու հիւանդութիւնների առիթ իրենցից սպասուղ օգնութիւնը, ոլքան հնար է, օր առաջ մեղ հասցնելու միջոց ու դիւրութիւն ունենան։ Այս է եղել և է միակ նպատակս, որին առ միշտ հաւատարիմ կը մնամ՝ ոլքան գրելու այժ կունենամ և, մանաւանդ, ոլքան մաուրն էլ իր յարգելի ուչադրութեանը կարժանայնէ մօտ 200 տուն պիւզացիներիս առօրեայ կեանքը նա։

Ամէն ձմեռ մեր անհնակները, յարգոյ ընթերցող, ապաքինում ենք սաղանցիներս ոչ թէ վայելուչ վառարաններով, այլ բաւոյապէս ու ֆիզիքապէս յոյժ վնասակար «քրսին» տաուածը գործածելով։ «Քրսինը» չորքոտանի մի քաղանցկին է՝ տախտակից չինուած, որ ձմեռները դնում են անհնակի որոչեալ տեղում՝ յատակի վրայ, ուր փորբիկ փոս է լինում փորուած։ Այդ փոսը ահա լցնում ենք ածուխի կրակով, վրըպատին» էլ ծածկում ենք կապերտներով ու վերմակով։ Այմուհետև, մեծ թէ փոքրը, տանըցի թէ հարևան, խառնահաս ու խառնահատակ, նստում ենք «քրսինի» չուրջը—չորս անկիւններում՝ «մինդուարների» վրայ—ոտներս (չաճախ և ձեռներս) տակը կոխելով։—Բայց բոլոր չարիքների մայր խաւարի մէջ՝ ինչ պատրի բամիներ տանս ոլ ակիզբ չեն դնում...

Վերջերիք անդադար «քրսինի» գործածութիւնը մեր գիւղերում,—կը վերահաս և մեզ քիչ ծնուցանող հանդամանքների համարեա մայրը։ Կը վերանան նոյնպէս և չատ, մանաւանդ վարակող հիւանդութիւնները—քոսի, ծաղկի, խարխուղի և այլն սկզբնապատճառները։

Իայց միայն սա չէ սպասիանցիներիս վէրքը։ Ցաւալին, միևնոյն ժամանակ և ապրուստիս ահա թէ ոլն է։—Մեր ապագայ հասարակութիւնը—մեր «բէյլիը արիւն» պատանիները—թատամում ու նիհարում են օր ըստ օրէ թիւնալի ախտերով, մաչում ու փչանում են այդ խնդրելը ամենիս աչքի առաջ և՝ մարմնով, և՝ հոգւով, և՝ մտքով... քայց գերեզման տանող—մահի դուռ քաչող այդ ախտի առաջն առնելու համար՝ չունինք մի հոգացող...

Այո, չունինք հոգացող։ Այս պատճառով էլ հենց գէշերը է, որ հրդեհւում են, մարդիկը է, որ այրում են, գիտով լի կարասներ է—որ կոտրատում են, խաղողի ծառեր է—որ կտրատում են... մկով էլ չեն բաւականանում արգելքները... «Դիւան չկայ, գետրա չկայ». որովհետև վկայ չկայ... իրաքանչիւրս էլ «երկու ձեռք՝ մի գդակ ենք արել»... թէ կուզ գիտենք էլ ով է չարագործը,—լռում ենք... «գլի ժամանակն չար է»... մէկը չկայ մեր մէջ, որ հասարակութեան չահերը իր մտածուած չահերից գերադասէ... հասարակութիւն ասածդ, իր բուն նչանակութեան, կարծես գոյութիւն չունի մեզանում... հասարակութիւն բառը, իւրն մի սուրբ գաղափար, կարծես գեռ նոր պիտի մարմնանայ մեր կողմերում... Ամենքս էլ հիւանդրըռում ենք միմիայն մեր եսով—մեր վարով ու գլուխով։ Սակայն, կեղծել, սուրանալ, փծնել, չողոքորթել, ճշմարտախօսութեան ամէնս գլուխները դղրդել—ճնշել, աչխատել առ երես բարեհամ ձևանալու՝ թէպէտ սրտին «թամկալը» լցուած, թէպէտ սրտին արիւնը ծծելու պատրաստ... Այդ մեր առօրեայ դրութիւնը։

Այս բոլոր ազէտները կարծես հերիք չեն.—առելորդ ասիրութիւնն ու չտայտլութիւնն ևս միւս կողմից են մեղ քաղաքներ ու ամէնքս քարոզանդ անելուց յետոյ՝ ընտանեկան հիմն ի վեր տապալող ներկայութիւնով,—դէպի կոնաստ առաջնորդում...

Իսկ ուրիշներին զարմացնելու վարպետը, որ իր փայլաչող դոյութիւնով կաչկանդած է գլխովին մեր կեանքը և ամաչին անդունդի բերան է բացած ամենիս առաջ,—նորնչասի և ամէնի աւերիչ ազդեցութիւնով է ներդործում մեր անվայել կենցաղի վրայ... Այդ հիւանդութիւնը—այդ ցեցը չարունակ ցոլացնում ենք տաղանդներս մի իրաքանչիւր ասած մէջ։ Չունինք մի բան, որ ուրիշներին զարմացնելու մտքով չլինինք արած... Մեր կանանց թանկագին հագուստներն անգամ, որ յաճախ պարտքով ենք լինում գնած, թոյլատրում ենք հագնելու՝ գլխաւորապէս ուրիշներին զարմացնելու համար... — Հարսանիքներում՝ փոխանակ ըստ սովորականին մի «չահանոց» կամ այլ արծաթեայ դրամ խլելու «դուռնաչուն» ճակատին իբրև «չօրօչ»,—սկսինք այժմ՝ այլոց զարմացնելու դատարկ բռնուած, հարիւրաւանոց ներովզարդարել նոյն «դուռնաչուռ» ճակատը (կանխապէս ի հարկէ, պայմանաւորուած են լինում՝ թէ մանչիից քանի կոպէկն է «չօրօչ» հաչուելու)։—Անչինչ դրութեան է հասցնում մեզ նիւթապէս առաջադիմելը՝ առանց մտաւորապէս առաջադիմած լինելու։

—

Բայց չվհատուինք։ Ցոյս դնենք մեր վանքի Բուդաղեան—վանական դպրոցի վրայ։

Ի դէպ. Ուսումը այդ դպրոցում սկսուել է ուսումնական տարեայս հոկտեմբեր ամսից։ 40—50 հոգի աչակերտներ են ժողովուած՝ Սաղանցից թէ չըջակայ գիւղերից։—«Լաւ են դասատալիս. չատ են սովորեցնում»—այս է իւրաքանչիւրիս կարծիքը՝ դպրոցի մասին ղրոյց լինելիս։ Բայց արժանապատիւ հայր Բարխուդարեանցը, իւր յոյժ մասչելի քաղցրութեամբ, առանձին հանգրտութիւն է վայելում մեր ամենից։ Անփոխարինելի կորուստ ենք համարում՝ եթէ մի կերպակի, անչրաժեչտ դէպքից ստիպուած, բացակայում ենք գիւղից։ Անբոզջ օրը ափսոսում ենք, որ զրկուել ենք հայր սուրբի ազդեցիկ քարոզին ունկընդիր լինելուց։

Խորին չնորհակալութիւն՝ որպէս մեր ուսումնարանը վերակենդանացնելու մասին ջերմ հոգացող Սէթասեան Մհսրոպ արքեպսին ու Բաղուի աւագ քահանայ Հ. Խորէն Միրզաբէկեանցին, նոյնպէս և նիւթական ապահովութիւնով բոլորովին վերակենդանացնող եղբ. Բուդաղեանցներին։

Սաղեանցի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԴՈՒ, 23 յունվարի.—Հանճարեղ վաղօրօք սրուած ծանուցման, կիրակի օրը, յունվարի 22-ին, տեղիս «Մարզ. Ընկ.» դպրոցի դահլիճում կայացաւ Բաղուի «Սուրբ Լուսաւորիչ» և «Սուրբ Աստուածածին» եկեղեցիների երկսփոխանների տարեկան հաչուետուութիւնը։ Ժամը 11-ին հասարակութիւնը սկսեց ժողովուել դպրոցի օրիորդաց բաժանման մեծ դահլիճը։ Ներկայ էին մօտաւորապէս տարբեր ժողովրդականներ, մեծ մասամբ տեղական ինտելիգենցիայից։ Բարեկարգիչ հայր Խորէնը բացատրեց, որ մօտերքս Շամախու թեմական առաջնորդը հրամանագրել էր, որ նախքան Բաղուի եկեղեցիների երկսփոխանների տարեկան հաչուետուութիւնը իրենց տարեկան հաչիւը կը տան հասարակութեան՝ առաջ պէտք է մի յանձնաժողով կազմուի, տեղական երկու դպրոցների հոգաբարձուներից բաղկացած, որ պէտք է նախ ինքը քննէ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ» ռուսերեն թերթը գրում է.

«Ամերիկայի Միացյալ Նահանգների Ֆիլադելֆիա քաղաքում հրատարակվող «Ամերիկյան Ժողովրդական Տարեգիրք»-ը հայտնում է, որ Ամերիկայում կան 100-ից ավելի հայ ուսանողներ։

* *

կով սպասքաւթիւն սովորականի թիւը հասնում է 35,400 հոգու։ Հաշվարկը-դերը կսկսանձնցաւ 1849 թուին։

***

Արթնահատ կաթս. — Ագիրկայի արևելեան ափում, Անգլիայի իշխանութեան տակ գտնուած հողում, արևմտահայ կռիւ է պատահել երկու թշնամի ցեղերի մէջ։ Այդ տեղը դանւում է Բօնդի գետի վրայ։ Երկու թշնամի ցեղեր, դարս են գալիս հրազարակ կռուելու, որոնցից յաղթողները, դերի վերցնելով յաղթուած կողմի գլուխը բոլոր գլուխցիներին, դիւրն էլ հրոյ ճարակ դարձնելով, ասնամարութիւն են կազմում, որի մէջտեղ բոլոր գերիներին ուտում են։ Կարծն այնքան սահուկ է եղել, որ գետի ջուրը կարմիր գոյն է ստանում և լցւում է սպանուածների պլակերպուած դիակներով։

*** Վիզնում (Բելգիա) անցեալ օրեր սարսափելի մի դէպք պատահեցաւ Ա.սուլիազանի ուսուցչի իւր 40 աշակերտների հետ սահնակով սառոյցի վրայ սահելիս, սառոյցը կոտրւում է և բոլորը միասին ընկնում են ջուրը։ Միմիայն մի երեխայ են կարողանում ազատել։

*** Լօնդոնի լօրդմէրը Չինաստանի սովեալների օգտին հանգանակութիւն է անում անգլիացիներից։ Թչնաւոր թւանը, ասուած է հրապարակի մէջ, այնքան մեծ է, որ Եւրոպացում հազիւ թէ կարողանան դասաւորապէս կազմել այդ մասին։ Կին և երեխայ հազարներով մնում են փողոցներում և ճանապարհներում։

*** Ամերիկացիները չեն կամենում ետ մնալ ֆրանսիացիներից, որոնք Էյֆելեան աշտարակ են չինում. ամերիկացիները մտադիր են Հուդսոնի վրայ չինել մի կամուրջ, որ պէտք է հռչակաւոր Բրուկլինեան կամրջից 400 մետր երկայն լինի։ Այս կամուրջն էլ, Բրուկլինեանի նման, պէտք է 140 մետր բարձր լինի ջրի մակերևոյթից։ Հաշուից երևում է, որ այդ կամրջի չինութիւնը 400 միլիոն ֆրանկից աւելի է նստելու։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ալէքսանդրօպոլի ոստիկանական վարչութեան մէջ փետրվարի 13-ին ամրողջ (երեք օրից յետոյ կրկնաձրդով) պիտի տրուի Ալէքսանդրօպոլի քաղաքային կշեռքը՝ ամէն Յոտնկանի օգոստոսի 20-ից սկսած, երեք տարի ժամանակով։ (ա)

—

Բագուի նահանգական վարչութիւնը նը առաջիկայ փետրվարի 25-ի-Բագուի կազեօննայա պալատում նշանակել է աճրդաձսսութիւն, երեք օրից յետոյ կրկնաձրդով, կապալով տալու առաջիկայ 1889 թուին Բագուի նահանգում՝ Ղուբալի, Շամախու, Լենքորանի և Բագուի բանտերը աքսորականներին և վերաքսորման դատապարտուած բանտարկեալների համար իրեղէններ (մահուց, կտաւ մի քանի տեսակ, ոչխարի մորթէ կեսամուշտակ, ատքի և ձեռքի շղթայ և այլն)մատակարարելու։

Իրերի յատկութիւնը պէտք է համապատասխանէ բանտային գլխաւոր վարչութեան 1887 թ. № 20 շրջաբերականին, կապալով կարելի է առնել մաս առ մաս կամ մեասին։ Մասնակցել ցանկացողները պէտք է գրաւական դնեն աճրդի նիւթի արժէքի 1/3 մասը և ներկայացնեն իրենց առևտուրի և այլ վկայաթղթերը։

—

Թիֆլիսի նահանգի պետական կալուածների վարչութիւնը յայտարարում է, որ մարտի 22-ին, Թիֆլիսի նահանգական վարչութեան մէջ, առանց կրկնաձրդի, պէտք է աճուրդ լինի սոյն յուլիսի 1-ից երեք տարով կապալով տալու համար պետական «Լօչինօ» հողաբաժինը, որ բազմացած է հերկելու, խոտ հնձելու, բանջարանոցի, պարտիզի և կենդանիներ արածեցնելու հողերից, 268 դէսեատին 1298 քառակուսի սաժէն տարածութեամբ, այդ հողաբաժնում եղած շինութիւններով և ուրիշ հաստատութիւններով։ Աճուրդը կ'սկսուի 425 րուբլուց։

—

Կովկասեան նահանգական ինտենդանտային վարչութիւնը վերջնականապէս վերացնելու կապակցութեամբ, Թիֆլիսի ինտենդանտային վարչութեան 1889 թ. № 1 շրջաբերականին, կապալով կարելի է առնել մաս առ մաս կամ մեասին։ Մասնակցել ցանկացողները պէտք է գրաւական դնեն աճրդի նիւթի արժէքի 1/3 մասը և ներկայացնեն իրենց առևտուրի և այլ վկայաթղթերը։

—

Թիֆլիսի նահանգի պետական կալուածների վարչութիւնը յայտարարում է, որ մարտի 22-ին, Թիֆլիսի նահանգական վարչութեան մէջ, առանց կրկնաձրդի, պէտք է աճուրդ լինի սոյն յուլիսի 1-ից երեք տարով կապալով տալու համար պետական «Լօչինօ» հողաբաժինը, որ բազմացած է հերկելու, խոտ հնձելու, բանջարանոցի, պարտիզի և կենդանիներ արածեցնելու հողերից, 268 դէսեատին 1298 քառակուսի սաժէն տարածութեամբ, այդ հողաբաժնում եղած շինութիւններով և ուրիշ հաստատութիւններով։ Աճուրդը կ'սկսուի 425 րուբլուց։

—

Կովկասեան նահանգական ինտենդանտային վարչութիւնը վերացնելու կապակցութեամբ, Թիֆլիսի ինտենդանտային վարչութեան 1887 թ. № 20